**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-2026/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

ք. Կապան 26 դեկտեմբեր 2025թ
ժամը 12:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ բուժ.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝
Սևակ Նավասարդյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտ.գծով տեղակալ
Արա Մանուկյան-«Կապանի ԲԿ»ՓԲԸ որակի վերահսկման և բարեփոխումների գծով տեղակալ
Լարիսա Հովհաննիսյան -«Կապանի ԲԿ»ՓԲԸ հաշվապահ
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

**1. Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 12:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

**2. Տեղեկություններ հայտերի բացման մասին**

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-2026/1** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | ՀՎՀՀ | Հասցե | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1. | «Շին-Քար»ՍՊԸ | 03573581 | Կոտայքի մարզ, գ.Առինջ 6-րդ փողոց, 28-11 | shinqarspy@gmail.com |
| 2. | «Արշ-Արա»ՍՊԸ | 09414862 | ք.Կապան, Երկաթուղայինների փող. նրբ.5, շենք 10/1 | arsharallc@mail.ru |

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին**

Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ

- «Արշ-Արա»ՍՊԸ-ի հայտում բացակայում են նմանատիպ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթերը՝ ակտի,արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները, ինչպես նաև աշխատակազմում ներգրավված բարձրագույն կրթությամբ առնվազն մեկ ճարտարագետ-շինարար առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով մասնագետի գրավոր համաձայնությունը, անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:
- «Շին-Քար»ՍՊԸ-ի հայտում բացակայում են աշխատակազմում ներգրավված բարձրագույն կրթությամբ առնվազն մեկ ճարտարագետ-շինարար առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով մասնագետի գրավոր համաձայնությունը, անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

**4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.**

| ՀՀ | Մասնակցի անվանում | Նախահաշվային գին | Մասնակցի գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Ընդամենը |
| *Չափաբաժին 1՝ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի պոլիկլինիկայի շենքի մասնակի ընթացիկ նորոգման աշխատանքներ* | | | | | |
| 1 | «Արշ-Արա»ՍՊԸ | 11055750 | 8425000 | 1685000 | 10110000 |
| 2 | «Շին-Քար»ՍՊԸ | | 9150000 | 1830000 | 10980000 |

5. Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

7. Մասնակիցներին հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով, **գնահատող հանձնաժողովը որոշեց** հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ ներկայացնելու բացակայող փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

**Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է 2026թ-ի հունվարի 08-ին ժամը 16:00-ին ք. Կապան, Մ. Ստեփանյան 13 հասցեում , որին մասնակցում էին՝**

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ բուժ.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝
Սևակ Նավասարդյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտ.գծով տեղակալ
Արա Մանուկյան-«Կապանի ԲԿ»ՓԲԸ որակի վերահսկման և բարեփոխումների գծով տեղակալ
Լարիսա Հովհաննիսյան -«Կապանի ԲԿ»ՓԲԸ հաշվապահ
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

8. «Շին-Քար»ՍՊԸ-ն և «Արշ-Արա»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում էլ.փոստով, գնահատող հանձնաժողովին են ներկայացրել պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝0

9. Հայտերը գնահատվել են ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-2026/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «**Բավարար**»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

10. Հաշվի առնելով ոչ գնային պայմանները բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Արշ-Արա»ՍՊԸ-ին** և անգործության ժամկետի ավարտին նրան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

11. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Վիրաբ Մանասյան

հանձնաժողովի անդամներ՝ ---------- Սևակ Նավասարդյան

---------- Արա Մանուկյան

---------- Լարիսա Հովհաննիսյան

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Սահականուշ Գրիգորյան